187

1394

1. Աստվա՛ծ իմ, Քեզ եմ սիրում, Դու գիտես՝
Քեզ եմ միշտ ծառայել ուզում,
Բայց ես մեծ կարիքով դիմում եմ Քեզ,
Օգնի՛ր ինձ այս մեծ պայքարում:

Դու իմ միակ հույսն ես,
Իմ ուրախությունն ես,
Դու՝ իմ Տեր ու Փրկիչ,
Միայն Դու և միայն Դու:
Դու կյանքի աղբյուր ես,
Զորության աղբյուր ես,
Դու՝ իմ Տեր ու Փրկիչ,
Միայն Դու:

2. Իմ ճանապարհը փշոտ ու նեղ է,
Իմ կյանքը տառապանք է, վիշտ,
Եվ առաջին սերս պաղել է,
Ո՞վ Աստված, վերափոխի՛ր ինձ:

3. Երբ փորձության մեջ ընկնեմ հանկարծ,
Մեծ դժվարությունների մեջ,
Տո՛ւր, որ Քեզ փառաբանեմ սրտանց
Ամեն մի պարագայի մեջ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025